ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-410-17.10.2022-ԱոՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել 65-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«65) կոնսիլիում՝ նույն կամ տարբեր մասնագիտությամբ բժիշկների խորհրդակցություն, որն իրականացվում է պացիենտի առողջական վիճակը գնահատելու, ախտորոշումը հաստատելու եւ բժշկական օգնության եւ սպասարկման մարտավարությունը որոշելու նպատակով.»: ~~Բժշկական կազմակերպություններում կոնսիլիումի կազմակերպման կարգը հաստատում է լիազոր մարմինը:».~~

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում լրացնել 8-րդ եւ 9-րդ մասեր հետեւյալ բովանդակությամբ.

«8. Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի (ընտանեկան բժշկի, թերապեւտի, մանկաբույժի) ընտրության, նրա մոտ բնակչության գրանցման եւ գրանցումից դուրս գալու կարգը, բնակչի կողմից ~~ԱԱՊ~~ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) բժշկին փոխելու ընթացակարգը, առողջության առաջնային պահպանման, նեղ ու դիսպանսերային ծառայություններ մատուցող մասնագետների կողմից սպասարկվող բնակչության կողմնորոշիչ թվերը հաստատում է լիազոր մարմինը:

9. Նորագույն եւ թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների ցանկը հաստատում է լիազոր մարմինը:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածից հետո լրացնել նոր 3.1-ին հոդված հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 3.1. Կոնսիլիում

1. Կոնսիլիում կազմակերպելու որոշումը կայացնում է այն բժշկական կազմակերպության ղեկավարը, որտեղ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու

նպատակով գտնվում է պացիենտը՝ բուժող բժշկի նախաձեռնությամբ կամ պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր պահանջով:

2. Կոնսիլիումին կարող են մասնակցել այլ բժշկական կազմակերպությունների բժիշկներ:

3. Կոնսիլիումի եզրակացությունը ենթակա է պարտադիր կատարման:

4. Կոնսիլիումը կարող է իրականացվել նաև հեռաբժշկության միջոցով:

5. Բժշկական կազմակերպություններում կոնսիլիումի կազմակերպման կարգը հաստատում է լիազոր մարմինը:»:

Հոդված ~~3~~"4. Օրենքի 6-րդ հոդվածում լրացնել 4-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«4. Լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպություններում լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների արդյունքների արձանագրմանը ներկայացվող նվազագույն պահանջները հաստատում է լիազոր մարմինը:»:

Հոդված ~~4~~" 5. Օրենքի 12-րդ հոդվածում լրացնել 1.1-ին մաս հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Լիազոր մարմինը հաստատում է ծննդի, պերինատալ մահվան եւ մահվան մասին բժշկական վկայականների պատրաստման, հաշվառման ու տրամադրման կարգը:»:

Հոդված ~~5~~"6. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը~~ում~~ լրացնել 13.1-ին ~~ենթա~~կետով հետևյալ բովանդակությամբ.

«13.1) լիազոր մարմնի կողմից նորածնային և մայրական մահերի դեպքերի մշտադիտարկում իրականացնելու նպատակով լիազոր մարմնի սահմանած կարգով և ժամկետում տեղեկատվություն տրամադրել լիազոր մարմնին այդ դեպքերի մասին.»:

Հոդված ~~6~~"7. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

~~1.~~ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~2.~~ Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: